ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՔ-ԳՀԾՁԲ-18/78» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ծ. Մկրտչյան, Ա. Գյուրջյան, Կ. Ղազարյան, Ռ. Մաիլյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

Գնանշման հարցման ընթացակարգի փաստաթղթերը գնահատելու մասին
(Ռ. Հովհաննիսյան)

1. **Փաստաթղթերի գնահատման՝**

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ.
-օրը՝ 19.06.2018թ.
-ժամը՝ 12:00

1. Ընդունել ի գիտություն, որ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է կատարվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, որի տրամադրված եզրակացության համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացրած հայտարարությունները համարվել են իրականությանը համապատասխանող:

2. Որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«ԱԶԴ» ՍՊԸ
2	«Մաստեր Սթայլ» ՍՊԸ

3.«Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:
«ԱԶԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ բացակայում է նախկինում կատարված 20.06.2017 թ. կնքված թիվ 170620 պայմանագրի 1.2.1. կետում նշված պայմանագրի հավելվածը և 02.03.2016 թ. կնքված թիվ 01 պայմանագրի ու 25.03.2016 թ. կնքված թիվ 25/03

պայմանագրի կողմերի պատշաճ կատարման վերաբերյալ հավաստումները կամ հանձման – ընդունման արձանագրությունները:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց օրենքով սահմանված կարգով առաջարկել «ԱԶԴ» ՍՊԸ-ն մեկ աշխատանքային օրում շտկել վերը նշված անհամապատասխանությունները և մինչև ժամկետի ավարտը այն չշտկելու դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

Հանձնաժողովի. Նախագահ՝		Ռ. Հովհաննիսյան
Անդամներ՝		Ռ. Մաիլյան
		Ծ. Մկրտչյան
		Ա. Գյուրջյան
		Կ. Ղազարյան
Քարտուղար՝		Ի. Եղիազարյան